§ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ¦ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ §ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ, «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ (ԹԵՆԻՍ)¦ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ **ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ** ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ընդունելության քննությունները հաշվարկվում են 20 միավորի սկզբունքով և անց են կացվում 3 վարժությունից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1-7 միավորով:

**Վարժություն թիվ 1**. Սկզբնահարված նշանակետին: Սկզբնահարվածը կատարվում է դաշտի աջ և ձախ կողմերում տեղադրված 1,5x1,5 մետր չափի նշանակետին: Կատարվում է 10 սկզբնահարված, յուրաքանչյուր նշանակետին՝ 5-ական: Վարժությունը գնահատվում է 1-7 միավորով:

| **Կատարման քանակը** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Միավորներ** | **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** |

**Վարժություն թիվ 2.** Հարված նշանակետին աջից և ձախից: Մարզապատից հետ եկած գնդակը գետնին դիպչելուց հետո 4 մետր հեռավորությունից ուղարկել 70x70սմ նշանակետին հաջորդաբար: Կատարվում է 10 հարված: Նշանակետերի հեռավորությունը 1 մետր: Վարժությունը գնահատվում է 1-6 միավորով:

| **Կատարման քանակը** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** |
|---|---|---|---|---|---|---|
| **Միավորներ** | **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** |

**Վարժություն թիվ 3.** Հարված նշանակետին աջից և ձախից: Մարզապատից հետ եկած գնդակը օդից ուղարկել 70x70սմ նշանակետին անկյունագծով, հաջորդաբար: Կատարվում է 10 հարված: Նշանակետերի հեռավորությունը 70 սմ: Վարժությունը գնահատվում է 1-7 միավորով:

| **Կատարման քանակը** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Միավորներ** | **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** |

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**. Վերջնական գնահատականը որոշվում է 3 վարժությունների վաստակած միավորների հանրագումարով:
Ընդունելության քննությունների ստուգողական պահանջները առաջարկվել են.

- Հանրակրթական դպրոցում չափորոշիչ պահանջներից ելնելով (հաշվի են առնվել շրջանավարտ աշակերտների պատրաստության մակարդակը)
- Թեստավորման միջազգային ստանդարտիզացիայի կոմիտեի չափորոշիչ պահանջները, որը վերամշակվել և տեղայնացվել է:
- www.itftenis.com